

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

**Միքջավաղ Յախչալի**

**Հարավկասպյան ավազանի գետանունները**

Ժ.02.06 – «ԱՍԻԱՅԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԼԵԶՈՒՆԵՐ (իրանագիտություն)»  
մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ – 2013

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական  
համալսարանում:

**Գիտական ղեկավար`** բանասիրական գիտությունների դոկտոր,  
պրոֆեսոր Գ. Ս. Ասատրյան

**Պաշտոնական**

**ընդդիմախոսներ`** բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Մ. Լ. Խաչիկյան

բանասիրական գիտությունների թեկնածու  
Վ. Խ. Փարսադանյան

**Առաջատար**

**կազմակերպություն`** Վ. Բրյուսովի անվ. պետական լեզվաբանական  
համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2013թ. ապրիլի 29-ին` ժամը 15<sup>00</sup>-ին  
ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում գործող ԲՈՀ-ի  
Լեզվաբանության 019 մասնագիտական խորհրդի նիստում (հասցեն`  
Երևան 0015, Գրիգոր Լուսավորչի փ. 15)

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի  
անվան լեզվի ինստիտուտի գրադարանում:

Մեղմագիրն առաքված է 2013թ. մարտի 27-ին:

Մասնագիտական խորհրդի գիտքարտուղար,  
բանասիրական գիտությունների թեկնածու`

Ն. Մ. Սիմոնյան

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

### Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Սույն ատենախոսությունը նվիրված է Կասպից ծովի հարավային ավազանի գետանունների ուսումնասիրությանը, դրանց իմաստային, ծագումնաբանական ու բառակազմական քննությանը:

Ստուգաբանական ու իմաստային քննության առումով իրանակասպյան տարածքների գետանունները դժվար մեկնաբանելի են: Շատ դեպքերում դժվար է վերականգնել դրանց նախնական տեսքը, և կատարել իմաստային վերլուծություն, որոնց պատճառները Կասպյան հարավային ավազանի գետանունների հետևյալ փոփոխություններն են. 1. վերանվանում, երբ գետանունը զանազան պատճառներով (որևէ մեկի հիշատակի հավերժացում և այլն) ամբողջովին կամ մասամբ փոխվում է, 2. թարգմանություն. այս կարգի փոփոխությունները վերաբերում են այն գետանուններին, որոնք պահպանելով իրենց իմաստային կողմը, նոր էթնոլեզվական հանրույթի կողմից թարգմանվում, և ժամանակի ընթացքում պաշտոնական կարգավիճակ են ստանում թարգմանված տարբերակները: Այս երևույթը դիտելի է հատկապես Արաքսի ենթաավազանի գետանունների դեպքում, որոնց թյուրքական անվանումները արձանագրված են որպես պաշտոնական անուններ, այն դեպքում որ, այս անվանափոխությունը հիմնականում թարգմանության արդյունք է և տեղի է ունեցել միայն անցյալ դարասկզբին, երբ Իրանի հյուսիսարևմտյան տարածքներում մեծ տարածում գտան թյուրքական խոսվածքները: Գետանուններում աչքի են ընկնում ոչ օրինաչափ հնչյունական փոփոխությունները, որոնք պայմանավորված են էթնոլեզվական միջավայրով: Այս փոփոխությունները կարող են լինել՝ ա) հին և նոր անվանադրողների լեզուների միջև առկա հնչյունական տարբերությունները, որոնք իրենց արտահայտությունն են գտնում գետի անվան մեջ, բ) ժողովրդական ստուգաբանության արդյունքում ի հայտ եկած հնչյունական տարբերությունները, երբ ժողովուրդը բառիմաստը իրեն հասկանալի դարձնելու համար փոփոխում է անունը՝ դրանով ասես վերաիմաստավորելով իմաստագրկված անունը, գ) հապավումը կամ ամփոփումը, որի արդյունքում երբեմն անհնար է վերականգնել իսկական ձևը, և վերջինը՝ սխալագրությունը, որը հատկապես

հնարավոր է արաբատառ անունների գրության ժամանակ (արաբատառ գիրը թույլ է տալիս փոփոխություններ ու աղավաղումներ նույնիսկ մեկ կետի կամ մասնիկի դեպքում): Այդ պատճառով նույն անունը կարող է հանդիպել տարբեր ձևերով, մասնավորապես, կարճ ձայնավորների հերթագրության կամ բացակայության դեպքում: Այս փոփոխություններով հանդերձ, գետանուններն անցնում են ժամանակի փորձությունը և տվյալներ պարունակում տարածքի սկզբնային վիճակի մասին՝ պահպանելով բազմաթիվ լեզվական հնագույն միավորներ ու ձևույթներ: Հարավկասպյան ավազանի գետանունները առաջնակարգ աղբյուր են հանդիսանում մերձկասպյան տարածքի լեզվական, նաև էթնիկ պատմության կամ էթնոգենեզի ուսումնասիրության համար, որով և պայմանավորված է այս ատենախոսության **արդիականությունը**:

### **Աշխատանքի նպատակն ու խնդիրները:**

«Հարավկասպյան ավազանի գետանունները» ատենախոսության **նպատակն** է գետերի անունների ծագումնաբանական, իմաստաբանական, բառակազմական քննության միջոցով վեր հանել տարածքի գետանունների լեզվական որոշարկման սկզբունքները, որոշարկել գետանունների կազմության իմաստային, բառապաշարային ու բառակազմական դաշտերը:

Այս նպատակն իրագործելու համար փորձել ենք լուծել հետևյալ առաջադիր խնդիրները.

1) առանձնացնել հարավկասպյան ավազանի գետանվանակազմիչ բառամթերքը և այն ենթարկել իմաստաբանական և ստուգաբանական համաժամանակյա և տարաժամանակյա վերլուծության:

2) բառապաշարը դիտարկել երեք շերտերում՝ իրանական, թյուրքական, արաբական և այլն:

3) դիտարկել գետանունների կազմության իմաստային սկզբունքները, քննել դրանք ըստ բնույթի և հատկանիշային կազմության:

4) իրականացնել Կասպից ծովի հարավային ավազանի գետանունների բառակազմական քննություն:

5) որոշարկել գետանվանակազմիչ ածանցները:

6) գետանվանակազմիչ հիմնաբառերը՝ հիմնականում «ջուր» իմաստային դաշտին պատկանող, դիտարկել պատմահամեմատական քննության լույսի ներքո:

8) ներկայացնել ատենախոսության մեջ քննարկված գետանունների ցանկը:

**Աշխատանքի գիտական նորույթը:**

Իրանի ջրանունները և մասնավորապես հարավկասպյան ավազանի գետերի անունները մինչ այժմ չեն ենթարկվել լեզվաբանական քննության, ի մի չի բերվել այն լեզվանյութը, որը կազմում է այս տարածքի գետանունների բառապաշարային առանցքը:

Ատենախոսության մեջ առաջին անգամ ամփոփ կերպով ներկայացվել է գետանուն կազմող բառամթերքը, Կասպից ծովի ավազանի գետերի անունների բառակազմական ու իմաստային օրինաչափությունները:

Առաջին անգամ փորձ է կատարվել ծագումնաբանական քննության ենթարկել գետանունների հիմնաբառերն ու բառակազմական ձևույթները, դասակարգել գետանուններն ըստ բնույթի ու հատկանիշի:

Ստուգաբանական քննության արդյունքում ի հայտ են եկել բառապաշարային այնպիսի միավորներ, որոնք ցույց են տալիս տարածքի հնագույն ժառանգականությունը: Մասնավորապես կարևորվում են իրանական հնագույն շերտը և ենթաշերտային բառապաշարը: Ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գետանուններում առկա արաբական, իսկ ավելի ուշ՝ թյուրքական շերտերը պատմության ընթացքում կատարված փոփոխությունների արդյունքում են ձևավորվել, և պետք է դրանք համարել ուշ շրջանի գետանուններ: Հարավկասպյան ավազանի գետանունները միանշանակորեն ենթաշերտային միավորների և իրանական հին բառապաշարի կրողն են:

Բազմաթիվ գետանուններ ներկայացվել են պատմական համատեքստում՝ անվանադրման պատմական պատճառաբանվածությամբ ու ճշգրտումներով:

**Աշխատանքի կիրառական նշանակությունը (գործնական ու տեսական արժեքը):**

Շրջանառության մեջ է դրվում Կասպից ծովի հարավային ավազանի գետանունները կազմող բառապաշարը, որը և ենթարկվել է ստուգաբանական և նաև մասամբ պատմական մեկնության: Վերջինս կարևոր տեսական նյութ է թե՛ իրանական, թե՛ հարակից տարածքների

տեղանվանագիտական ուսումնասիրությունների համար, որով էլ բացատրվում է աշխատանքի **տեսական** նշանակությունը:

Աշխատանքի եզրահանգումները՝ ջրանունների կառուցվածքի, ջրանվանակերտ լեզվանյութի ծագումնաբանության վերաբերյալ կնպաստեն մերձկասպյան տարածքների լեզվական, էթնո-դեմոգրաֆիական նկարագրի վերականգնմանն ու որոշարկմանը: Առանձնացված ջրանվանակերտ հիմնական և երկրորդական ձևույթները, բառապաշարային շերտերը համաժամանակյա կտրվածքով հնարավորություն կստեղծեն պարզելու ջրանուններ կերտելու հիմնական օրինաչափությունները, նոր գետանուններ կազմելիս ստեղծել տրամաբանական ու հնի հետ ներդաշնակ նոր ենթահամակարգ, որն էլ համարվում է աշխատանքի **գործնական** արժեքը: Տեսական հիմնադրույթները կարող են տեղ գտնել տեղանվանագիտական դասընթացներում:

**Աշխատանքի մեթոդաբանական հիմքը:**

Սույն ատենախոսությունը մերձկասպյան տարածքների գետանունների համակողմանի քննության առաջին փորձն է, որն ուղղված է նպաստելու այս տարածքի հնագույն էթնոլեզվական գործընթացների լուսաբանմանը:

Աշխատանքի բնույթը թելադրում է մի քանի մեթոդների համակցված մոտեցում: Կիրառվել են համեմատական, արտաքին և ներքին վերականգնման, կառուցվածքային, պատմահամեմատական մեթոդները, որոնց միջոցով վերականգնվել, այնուհետև իմաստային, ծագումնաբանական քննության են ենթարկվել գետանունները: Կառուցվածքային մեթոդի օգտագործմամբ որոշարկվել է գետանվան բառակազմական տիպը:

**Աշխատանքի ժամանակագրական սահմանները:**

Ատենախոսության ժամանակագրական սահմանները որոշարկվում են գետանունների ծագումնաբանական քննությամբ, որը հասնում է մինչև նախաիրանական, հին իրանական շրջաններ:

### **Աշխատանքի փորձաքննությունը:**

Ատենախոսության հիմնական դրույթները լուսաբանվել են հանրապետական գիտական “Orientalia” և «Իրան-Նամե» հանդեսների էջերում հեղինակի լույս ընծայած հոդվածներում:

Աշխատանքը քննարկել ու պաշտպանության են երաշխավորել ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի գիտական խորհուրդն ու իրանագիտության ամբիոնը:

### **Աշխատանքի կառուցվածքն ու հիմնական բովանդակությունը:**

Ատենախոսության հիմնական մասը կազմված է ներածությունից, թվագրված ենթաբաժիններից կազմված երեք գլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության և ատենախոսության մեջ քննարկված գետանունների ցանկերից:

### **Սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսություն:**

Իրանի ջրանունների և մասնավորապես հարավկասպյան ավազանի գետանունների ուսումնասիրությունը կարևորվում է առաջին հերթին այն հանգամանքով, որ գտնվում է նախնական փուլում և ներկայացվող աշխատանքը այս բնագավառում կատարված եզակի հետազոտություններից է:

Ատենախոսության համար աղբյուրագիտական նշանակություն են ունեցել Farhang-e Joyrāfyāyi-ye rūdhā-ye kešvar /*Երկրի գետերի աշխարհագրական բառարան*/-ը երկհատորանոց աշխատության երկրորդ մասը, որը ներկայացնում է Կասպից ծովի ավազանի գետերը, ինչպես նաև Աբբաս Ջաֆարիի *Gitā-senāsi /Երկրագիտություն/* ուսումնասիրության երկրորդ գիրքը, որտեղ ներկայացվում է Իրանի ջրային ավազանի հիմնական պատկերը, *The Caspian Sea Encyclopedia /Կասպից ծովի հանրագիտարանը/*-ը, որտեղ հիմնականում ընդգրկված են Կասպյան ավազանի խոշոր գետերը, Դեհխոդայի նոր պարսկերենի 14-հատորանոց բառարանը:

Միևնույն ժամանակ, ըստ հարկի, ներառվել են նյութին առնչվող բազմալեզու ուսումնասիրություններ:

## **ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ**

Նախաբանից հետո, որտեղ ներկայացվում է գետանունների նշանակությունը որպես պատմալեզվական աղբյուր, ժամանակի

ընթացքում այդ անունների կրած հնարավոր փոփոխությունները և նախնական ձևերի վերականգնման օրինաչափությունները, հիմնավորվել են հարավկասպյան տարածքների գետանունների ուսումնասիրության արդիականությունն ու կարևորությունը:

Ներածության մեջ ներկայացվում է Կասպից ծովի և դրա հարավային ավազանի հիմնական բնութագիրը: Առանձին ենթաբաժիններով քննարկվում են Կասպից ծովի հարավային բոլոր ենթավազաններն ու դրանց հիմնական գետանունները: Ենթավազանների ու մեծ գետերի անունները ենթարկվում են հնարավոր իմաստային ու ծագումնաբանական քննության: Մանրամասն ներկայացվում է նաև Կասպից ծովի անվանագիտության պատմությունը:

Ներածության շրջանակներում ներկայացվում է իրանական և, մասնավորապես, հարավկասպյան ավազանի ջրանվանագիտության պատմությունը:

### **ԳԼՈՒԽ 1. Հարավկասպյան ավազանի գետանունների իմաստային քննությունը (ենթագլուխներ 1.1 – 1.2)**

Ջրանվանագիտության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գետերը անվանելիս ելակետ է ընտրվում տվյալ վայրի կամ օբյեկտի առավել տիպական հատկանիշը, որով այն տարբերվում է մնացած նմանատիպ օբյեկտներից: Ընդհանրապես, ջրային տարածքները տարբերվում են իրենց ֆիզիկաաշխարհագրական տվյալներով, քիմիական և այլ բնութագրիչներով:

Գետերի անունները բնորոշվում են հիմնականում ջուր կամ ջրային տարածք անվանող բառաշերտի գոյությամբ: Հարավկասպյան ավազանի գետանվանակերտ հիմնական բառապաշարում առանձնանում են հետևյալ շերտերը.

- իրանական
- թյուրքական, արաբական
- օտար

#### ***1.Իրանական շերտ***

Ուսումնասիրվող արեալում գերիշխող իրանական շերտը ներկայանում է հետևյալ միավորներով.

**āb** – «ջուր», ունի հիմնական և ձևակազմիչ կիրառություն՝ ստանալով «գետ, հոսող ջուր» իմաստը: Ստուգաբանորեն բառամիավորը գալիս է



հ.իր. \*ā/ap- նախաձևից (< հնդեվր. \*āp-), հմմտ.՝ պիլվ. āp, միջին մանիք. պ. և պրթև. āb, սողդ. ʾph/āp/, հ.պ. ap-, ավ. ap-, հ. հնդկ. ap-:

**čam** - «գետ», հանգում է միջին արևմտաիրանական \*čēmak, այսինքն՝ «տեղ գետի ափին մոտ» ձևին: Ընդհանրապես, čam ձևը հանդիպում է տեղանուններում, որոնք գտնվում են ջրային տարածքներին մոտ և ջրանուններում: Անկասկած, նույնական է քրդերեն čam «գետ» բառամիավորի հետ: Քննարկվող բառաձևն ունի իրանական ծագում և հանգում է հին իր. čam-/\*kam- արմատին: Հին իրանական շրջանում գոյություն են ունեցել նման երկու նախահիմք՝ 1. «տանել, տեղափոխել» իմաստով և 2. «ընթացքի մեջ լինել, քայլել», հմմտ.՝ պրթև. čam «վազել» և čamag «ընթացք», ն.պ. čamīdan, հյ.՝ *ճեմէլ*: Իհարկե, čam –ը «գետ» իմաստով հանգում է նախաձևի երկրորդ իմաստին:

**darre** – «ձորակ, ճեղք», ջրանուններում ունի հիմնական և ձևակազմիչ նշանակություններ՝ ցույց տալով ջրային տարածք: Ծագում է հ. իր. \*darna- < \*dar- «ճեղքել, պատռել» արմատից:

**rūd**- «գետ», հմմտ.՝ հ.պ. rautah, պիլվ. rot, քրդ. ro, բելուջ. rot < \*hrau- (հնդեվր. \*(s)reu-) «հոսել» արմատից, ամենատարածված ջրանվանկերտ միավորն է:

**jū/jūb** – «առու, առվակ», հմմտ. հ.պ. yauvia, մ.պ. yoi և joi, քրդ. ju, բել. jo և այլն: Գետանուններում գործածվում է «գետ» իմաստով:

**čāl** - «հոր, ջրափոս», գետանուններում՝ «գետ», ծագում է հ.իր. \*čāθa- նախաձևից, \*kan- արմատից:

**xūnī** - «աղբյուր», գետանուններում՝ «գետ»: Այս բառամիավորի՝ xuni, xāni, xān, kān ձևերը ջրանուններում գործածվում են և՛ հիմնական, և՛ երկրորդական ձևային գործառնությունով:

**češme** – «աղբյուր», ոչ հազվադեպ հանդիպող գետանվանակերտ ձևայիններից է:

**kāl** – այս բառն ունի «նեղ ջրանցք» նշանակությունը, որն առաջացել է բնական ճանապարհով, այսինքն՝ ժամանակի ընթացքում քանդվել է ջրի հոսքից:

**kahriz** – «ստորգետնյա ջրանցք», որի հիմքում ընկած kah-/kā(h)- ձևը՝ ծագում է \*kaθa դերբայից < հին իր. kan- «քանդել» արմատից:

**daryā** – իրանական լեզուներում այն նշանակում է «ծով», սակայն ոչ մեծ թվով գետանուններում այն պարզապես նշանակում է «ջրային տարածք»:

**kande** – «kandan» < \*kan- «քանդել» արմատից և նշանակում է «քանդած, հոր, տեղ, տուն»:

## **2. Թյուրքական շերտ**

**čāy** – «հղկված գետաքար, կավիճ, չորացած գետահուն, ձորակ, հեղեղատ, խանդակ, գետ»: Այս բառն ունի թյուրք-մոնղոլական ծագում: «Древнетюркский словарь»-ը, հղելով Մ. Քաշգարիին, տալիս է հետևյալ բացատրությունը. «say «հրաբխային ծագմամբ քարքարոտ տեղանք», say jazı «քարքարոտ հարթավայր», sayram, sayram suv «փոքր, ոչ խոր ջրային տարածք»:

**sū** – «ջուր», թյուրքական ծագման բառամիավորը նույնպես լայն տարածում ունի գետահուններում:

**göl / köl** – «գետ, ջրամբար», թյուրքական լեզուներում և բարբառներում այս բառը հանդիպում է տարբեր հնչյունական կազմով, հմմտ.՝ թուրքմեներեն, ուզբեկերեն köl, ադրբեջաներեն göl և այլն, իսկ իրանական լեզուներից այն որպես փոխառություն հանդիպում է տաջիկերենում, աֆղաներենում, օսերենում՝ kul «լիճ» ձևով:

## **3. Արաբական շերտ**

**nahr** – «առվակ», ընդհանրապես՝ «հոսող ջուր», ունի արաբական ծագում:

## **4. Օտար շերտ**

**kānāl** – «ջրանցք», այս բառամիավորն ունի ֆրանսիական ծագում, սակայն բավական տարածված է Իրանի, մասնավորապես Կասպից ծովի ավազանում:

Հարավկասպյան ավազանի գետահունների կազմության իմաստային սկզբունքները դասակարգվում են հետևյալ կերպ.

1. Գետերի ֆիզիկաաշխարհագրական տվյալները արտացոլող գետահուններ, որոնք բնութագրում են ջրի ընթացքը, գույնը, համն ու հոտը, հունի աշխարհագրական տվյալները և այլն:
2. Անվանական արժեք ձեռք բերած հասարակ գոյականները դառնում են գետահուն կերտող բառ և կարող են դառնալ գետի շրջակա միջավայրի նկարագրիչ:
3. Բուսանուններից կազմված բնական միջավայրն արտացոլող գետահուններ:
4. Կենդանիների անուններից կազմված բնական միջավայրն արտացոլող գետահուններ:

5. Անձանուններն ու պատմական իրադարձությունները, տեղանունները կապակցության մեջ են մտնում ջրանիշ բառաձևի հետ՝ ստեղծելով գետանուն: Երբեմն տեղանունը ուղղակիորեն փոխանցվում է գետին:
6. Գետանուններ, որոնց կառուցման հիմքում պաշտամունքային ժառանգականությունը արտացոլող եզրեր են:
7. Ցեղանուններից կազմված գետանուններ. գետը կոչվել է այն ցեղի անունով, որը բնակություն է հաստատել դրա ափին:
8. Հնչիմաստային գետանուններ՝ կազմված բնաձայնությունների հիման վրա:

**ԳԼՈՒԽ 2. Հարավկասպյան ավազանի գետանունների բառակազմական սկզբունքները և խոսքիմասային մանրակադապարները (ենթագլուխներ 2.1 - 2.4)**

Տեղանվանագիտության, մասնավորապես գետանունների ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձանցնելու բառակազմական հիմնական մի քանի խմբեր, որոնք, թերևս, համընկնում են լեզվաբանությանը հայտնի բառակազմական խմբերին: Այստեղ ևս գործում են բառակազմական, բառակապակցական, շարահյուսական միևնույն օրենքները, որոնք հատուկ են տվյալ ջրանունն ստեղծած ժողովրդի լեզվին:

Գետերի անունները սովորաբար «ջուր» իմաստային դաշտին պատկանող բառերի (ծով, ջուր, հեղեղ, առու, գետ, ճահիճ, աղբյուր և այլն), ինչպես նաև ջրին բնորոշ (հոսել, թափվել, գահավիժել, ծփալ և այլն) գործողություններ և հատկանիշներ (մաքուր, պղտոր, արագ, դանդաղ, ուրախ, գունային երանգներ անվանող և այլն) նշող բառերի ածանցյալների տեղանվանացումներ են: Հատկանիշ արտահայտող գետանունները հիմնականում հարադիր են՝ որոշիչ-որոշյալ տիպի, որոնք կարող են ունենալ նաև պարսկերենին բնորոշ շարադասություն՝ որոշյալ-որոշիչ:

Գետանունները ըստ կազմության կարող են լինել.

*1. պարզ արմատական*

Արմատական գետանունների մի մասը պարզ բառերի տեղանվանացված տարբերակներն են, ընդ որում, կարող են լինել նկարագրական բնույթի, հատկանիշ ցույց տվող բառեր: Արմատական ջրանունները հին են ու դժվար մեկնաբանելի, դժվար է դրանց լեզվական

առնչակցության որոշարկումը, օրինակ՝ *Ašk* իր. «արցունք», *Toš* արար. «մեղմ, հանդարտ գետ», *Šor* իր., ըստ ամենայնի, «աղի» և այլն: Նշենք, որ արմատական անուններում հիմնականում տեղի է ունեցել ջուր իմաստային դաշտին պատկանող միավորի կորուստ:

### 1.1 պարզ ածանցավոր

Պարզ ածանցավոր ջրանունները հարավկասպայն ավազանի գետանուններում մեծ թիվ են կազմում և քանակային առումով գերազանցում են պարզ արմատական անուններին: Ջրանուն կերտող ածանցները հիմնականում վերջածանցներ են և ըստ գործածության բաժանվում են հետևյալ խմբերի՝

- կենսունակ ածանցներ, որոնք շարունակում են ջրանվանաստեղծ գործածությունը, ածականակերտ ու գոյականակերտ նշանակությունը,
- ոչ կենսունակ ածանցներ,
- լեզվական պատկանելության տեսակետից ածանցները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ իրանական և թյուրքական, որտեղ գերակշիռ մաս է կազմում իրանականը:

-ā – ձևույթը ոչ հաճախադեպ միավորներից է Կասպից ծովի ավազանի գետանուններում: Ըստ ամենայնի, այն -ān ձևույթի կրճատված տարբերակն է՝ *Bongī* «աղմկոտ», *Īlkī* և այլն,

-ābād – վերջածանցը դասվում է ջրանվանակերտ ցուցիչների շարքը: Ծագում է միջին իր. \*āpāt < հին իրան. \*ā-pāta «պահպանված» (\*pā(y) «հետևել, խնամել, պահպանել» արմատից) ձևից, *Šrābād* «լավ տեղ (գետ)», *Zarābād* «ոսկով լի տեղ (գետ)» և այլն,

-aj – վերջածանցը հանգում է հին իրան. \*(a)ka- նախաձևին և դրա ուշ միջին պրակ \*-ag ձևի արաբականացած տարբերակն է: Կասպից ծովի ավազանի գետանուններում ոչ շատ հաճախ հանդիպող ձևույթներից է, *Dizaj* և այլն,

-ak/-āk, -aj, -ag -aq – վերջածանցները մեծ տարածում ունեն Կասպյան հարավային ավազանի գետանուններում՝ *Tarak* tar և -ak՝ tarra < \*tarna-ka- «ջրառատ» և այլն,

-ān – վերջածանցը առանձնանում է իր տարածվածությամբ և հնարավոր երկու իմաստային կիրառությամբ. այն կարող է ունենալ հոգնակիակերտ նշանակություն < հին իրան. \*-ānām և լինել պատկանելություն ցույց տվող պատրոնումիկ ածանց (< միջին իրան. -akān), օրինակ՝ *Teškān* < tel/tol ծառատեսակի անունից և այլն,

**-Bār/-bar/-rūdbār** - bār ձևույթը իրանական բնիկ ածանցներից է, որը հիմնականում կազմում է ջրանուններ: Այն «ափ» նշանակությամբ հանգում է միջին պրսկ. pār «ափ, եզր» ձևին < հ. իր. \*pāra- ձևից < par- «անցնել, մյուս կողմն անցնել» արմատից և ջրանուններում որպես ձևակազմիչ ձևույթ ձեռք է բերել «գետ» նշանակությունը, օրինակ՝ **Ābbar** «գետ» և այլն,

**-band** - ջրանուն կառուցող երկրորդական ձևույթը ծագում է հին իր. \*banda- < \*band- «փակել, կապել» արմատից, հմմտ.՝ ավ. Banda- «կապ, շղթա», ni-vanda- «շղթա, գերություն» բառերը և այլն, օրինակ՝ **Golband** և այլն:

**-dar** - ձևույթն ունի «դուռ, դարպաս, նան՝ մուտք» նշանակությունը, հմմտ.՝ dar «դուռ» < հին իր. \*dwar- նախաձևից, հմմտ. պ. dar, հյ. *դուռ*: Այս ցուցիչը ջրանուններում երբեմն հանդիպում է «մեջ» նշանակությամբ՝ հմմտ.՝ պրսկ dar «մեջ, ներսը», **Āsyābdar**, **Āftābdar** և այլն,

**-ī** - ածանցը վաղ միջին պրսկ. \*-īk վերջածանցի < \*-ya-ka (> հայ. «-իկ») կրճատ տարբերակն է, օրինակ՝ **Pohrī** և այլն,

**-kān/ -gān/-qān/-jān** – վաղ միջին պրսկ. \*-kān և ուշ միջին պրսկ. \*-gān ձևակազմիչները, որոնք պատկանելություն են հաղորդել գոյականներին, հանգում են հին իր. \*-akān- ձևին: Այս ձևույթների արաբական՝ -qān, -jān տարբերակները նույնպես հանդիպում են գետանուններում, օրինակ՝ **Barzjān**, **Pašgeljān** և այլն:

**-sar** «զլուխ, ծայր», ջրանուններում՝ «ակունք», ծագում է հին իրան. \*sarah-, sāra- ձևերից, **Gaznāsar** ևլն,

**vāš/-vaš** - վերջածանցը տեղանուններում և ջրանուններում հաճախ հանդիպող ձևույթներից է, որը պարսկերենում ունի ածականակերտ գործառույթ, օրինակ՝ **Sūrfvaš** ևլն:

**ū** – վերջածանցը հանգում է միջին պրսկ -ōk փոքրացուցիչ ածանցին՝ -k- ի սղմամբ, օրինակ՝ **Ārmū**, **Dazū** և այլն:

## 2. Բարդ գետանուններ

Կասպից ծովի հարավային ավազանի բարդ գետանունների մի մասը որոշյալ-որոշիչ բաղադրյալ անունների շրջադարձ ձևերն են: Ըստ ծագման՝ բարդ ջրանունները լինում են.

- իրանական
- թյուրքական

- հիբրիդային (իրանական-թուրքական, իրանական-արաբական, արաբական-թուրքական), օրինակ՝ *Pirāyāj* գետի անունը՝ իր. *Pir* «ծեր, իմաստուն» և թրք. *Āyāj* «ծառ» միավորներից և այլն:

Բարդ գետանունների մեջ մեծ թիվ են *rūd* միավորով անունները, որոնք ունեն հետևյալ մանրակաղապարները՝

*Uđական + rūd մանրակաղապար՝ Talxe-rūd* - նշանակում է «դառը գետ», հմմտ.՝ պ. *talx* «դառը», պիլվ., պրթև. *taxl* < \**taxra*- նախաձևից,

*Գոյական + rūd մանրակաղապար՝ Xūk-rūd* - *Xāk* «հող» < հին իր. \**āhaka*-՝ բառակազմի *x-* ի երկրորդական հավելմամբ, և *rūd* «գետ» բաղադրիչներից,

*Բայահիմք + rūd մանրակաղապար՝ Vīsrūd* - առաջին բաղադրիչը ծագում է \**waid*- «զգել» արմատից, պիլվ՝ *vist-* (*vih-*) «զգել, նետել», *ta-vesta* «ներքև զգել» և գետանունն էլ ունի «(ջրերը նետող), գահավիժող գետ» նշանակությունը:

Բարդ գետանուններում գործածվող միավորներից է նաև *թալ.*, գիլ. *xāla* միավորը՝ «վտակ» նշանակությամբ<sup>1</sup>, արձանագրվել է նշված ենթաավազանի հետևյալ գետանուններում՝ *Xāla-sarā*, *Rasta-Xāla*, ևլն:

*Xūnī/Xānī* «աղբյուր» բառամիավորը, հմմտ.՝ մանիքեական միջին պրսկ. *xānīg* «աղբյուր», քրդ. *kānī* «աղբյուր», նոր պրսկ. *kān* «հանք, ջրանուններում հանդիպում է բարդ գետանուններում, օրինակ՝ *Haft-xūnī* - *haft* «յոթ» և *-xūnī* «աղբյուր», *Hasan-xūnī* «Հասանի աղբյուր» ևլն:

### 3. Հարադիր կազմությամբ գետանուններ

Կասպից ծովի գետանունների մի ստվար զանգված վկայված է տարբեր մանրակաղապարային կապակցություններով և բառակապակցություններով, որոնց եզրերից մեկը տեսականիշ բառն է՝ *գետ*, *աղբյուր*, *ջուր*, *լիճ*, *ծով* և ջրային տարածք նշանակող այլ միավոր: Այդ կապակցությունները կարող են լինել՝ հատկացյալ-հատկացուցիչ տիպի կապակցություններ, օրինակ՝ *Čam-e Sīrvīn*, որտեղ հատկացուցիչի պաշտոնում հանդես են գալիս անձնանունները, օրինակ՝ է *Hasan Xūnī* «Հասանի (աղբյուր)գետ», ցեղանունները, օրինակ՝ *Česme Gile* «գելերի գետ», հատկացյալ-հատկացուցիչ կամ հատկացուցիչ-հատկացյալ կապի մյուս տեսակն էլ հասարակ գոյական-գոյական

<sup>1</sup> Բառամիավորը ստույգ ստուգաբանություն չունի, սակայն, ըստ ամենայնի, այն կարելի է կապել քրդ. *x<sup>(v)</sup>ār*, ն.պ. *x<sup>(v)</sup>ol* «ծուռ» ձևի հետ < հին իր. \**kawaθra-* > \**xwaθra-* < *x<sup>(v)</sup>ār* < *x<sup>(v)</sup>āl*, հմմտ.՝ մանիքեական միջին պարսկերեն *xvahl*:

մանրակաղապարն է, օրինակ՝ *Čam-e Bid* «ուռենու գետ», որոշյալ-որոշիչ կամ որոշիչ-որոշյալ կապակցություններ, օրինակ՝ *Čam-e bozorg* «մեծ գետ»:

*4. Գետանունները կազմվում են խոսքիմասային հետևյալ կաղապարներով.*

գոյական, ածական, թվական, գոյական + ածական/ածական + գոյական, գոյական + գոյական, գոյական + բայահիմք/բայահիմք + գոյական, գոյական + թվական/թվական + գոյական:

### **ԳԼՈՒԽ 3. Գետանունների ծագումնաբանական քննությունը**

Հարավկասպյան ավազանի գետանունների ծագումնաբանական քննությունը պարզում է, որ այս անունների մեծ մասը ներկայացնում է իրանական լեզվոլորտը: Ընդ որում, հին իրանական արմատների կամ ածանցյալների մի շարք արտացոլումներ պահպանվել են հարավկասպյան գետանուններում, սակայն դուրս են մնացել իրանական բառապաշարից (գոնե չեն վկայված): Գետանունների հիմնական բառաշերտ կազմող միավորները մեծ մասամբ իրանական են: Իրանական գետանունների ոլորտն են մտնում բնիկ բարբառային ձևերի գոյությունը՝ թալիշերեն, մազանդարաներեն, գիլաներեն: Ուշ ջրանունները՝ նոր և նորագույն շրջանի, հիմնականում պարսկերեն կազմություններ են, որոնք լեզվական և իմաստային տեսակետից միանգամայն թափանցիկ ու հասկանալի են: Ըստ լեզվական պատկանելիության՝ գետանունների մյուս շերտը թյուրքական անուններ են, որոնք նույնպես կարող ենք հիմնականում դասել ուշ գետանունների շարքը: Թյուրքական գետանունները ընդգրկում են Արաքսի ենթավազանը, որի, օրինակ, 265 գետանուններից միայն 30 անունը կազմված են թյուրք. qara «սև» գունանունով:

Գետանունների ծագումնաբանական այս քննությունը թույլ է տալիս հավաստելու, որ Կասպից ծովի հարավային ավազանի Թալեշ-Էնգելի, Մեֆիդուդ, Գորգանուդ, Չալուս, Նեքա-Թեջեն, Թալար-Բաբուլուդ ենթավազաններում գերակայում է իրանական շերտը, թյուրքական միավորները բավական փոքր մաս են կազմում, որոնք բացակայում են Արաքս և մասամբ՝ Աթրաք ենթավազաններում:

Մերձկասպյան տարածքները Իրանական բարձրավանդակի այն շրջաններն են, որոնք նախաիրանական շրջանում (մինչ մ.թ.ա 2-րդ հազարամյակը) բնակեցված են եղել բնիկ ցեղերով՝ կադուսներով,

գելերով, տապուրներով, դեյլամներով, կասպերով, ամարդներով, գարգառներով և այլն: Նախաիրանական այս ցեղանունները հետագայում իրենց արտացոլումը գտան ցեղանուններում, հմմտ.՝ կադուս > թալիշ, գել > գիլանցի, տեղանուններում, հմմտ.՝ գել > Գիլան, Տապուր > Տաբարեստան, կասպ > Ղազվին, ամարդ > Ամոլ և այլն, ինչպես նաև՝ գետանուններում: Այս ցեղանունները փաստորեն մաս են կազմում այն ենթաշերտի, որը իր շարունակությունն ու վկայությունն է գտել ժամանակակից տեղանուններում: Ենթաշերտային գետանուններ են՝ *Lāhījān Rūd, Lāvīj Rūd, Karkar Čāy, Pīlambar, Pūlarūd, Tīlerūd* և այլն:

*ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Հարավկասպյան ավազանի գետանունների իմաստային, կառուցվածքային ու ծագումնաբանական վերլուծության հիման վրա կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները.

1. Իրանի հյուսիսային ջրային ամենամեծ տարածքը Կասպից ծովն է: Այն հյուսիսում հարում է Ղազախստանին ու Ռուսաստանի Դաշնությանը, հարավում՝ Գիլան, Մազանդարան, Գոլեստան նահանգներին, արևմուտքում՝ Ադրբեջանի հանրապետությանն ու կրկին Ռուսաստանի Դաշնությանը, արևելքում՝ Թուրքմենստանին ու Ղազախստանին: Գորգանի ծոցը հարավարևելքում և Անգալի լիճը հարավ-արևմուտքում Կասպից ծովի կարևոր ջրային կտրվածքներից են: Դրանցից առաջինը ծովից բաժանվում է *Միյանքալե* կոչվող թերակղզով, իսկ Անգալի լիճը՝ Ղազյան կղզով: Կասպից ծովի երկարությունը 1205 կմ է, լայնությունը՝ 554 կմ, ամբողջ տարածքը 438.000 կմ քառակուսի է, ջրի ծավալը՝ 79.319կմ խորանարդ, օգտագործվող ափերը՝ 6379 կմ, որից 992 կմ պատկանում է Իրանին:

2. Կասպից ծովի տեղանվանագիտության պատմությունը ցույց է տալիս, որ այն հիշատակվել է հետևյալ անուններով՝ Վաուրու-Կաշա, Մի-Հաի, Ֆրախկերտ, Հիրկանաց, Կասպից, Խազարաց, Ղազվինի, Դեյլամի, Աբասքուն, Ղոլզումի, Աստրախանի, Բան-ալ-Աբվավավի կամ Դերբենդի, Ամոլի, Ասթարաբադի, Շիրվանյան, Մուղանյան, Գիլանի, Դեյլամի, Թաբարեստանի, Աբասքունի, Բաքվի, Խվալիսի, Գուզգունի, Խորասանի, Դահեստանի, Մարիի, Գորգանի կամ Ջուրջանի, Մազանդարանի կլն:



3. Հարավկասպյան ավազանը բաժանված է ինը ենթավազանների՝ Սեֆիդոուդ, Արաս, Աթրաք, Գորգանոուդ, Չալուս, Նեքա-Թեջեն, Թալեշ-Անգալի, Թալար-Բաբոլոուդ ու Հերազ: Ընդ որում, գետերի բազմաքանակությամբ առանձնանում է Սեֆիդոուդի ենթավազանը: Կասպից ծովի հարավային ավազանի խոշորագույն գետերն են Ղըզըլուզանը, Սեֆիդոուդը, Արաքսը, Աթրաքը, Գորգանոուդը, Ղարեսուն, Ղոթուրչայը, Նեքան, Թաջանը, Թալվարը, Հերազը, Թալարը և Չալուսը:

4. Իրանի ջրանուններին ուղղակիորեն նվիրված աշխատությունները բավական քիչ են, և այդ անունների քննությունը հիմնականում ներառված է տեղանվանգիտական ուսումնասիրություններում: Մահմանափակ թիվ ունեն նաև հարավկասպյան ավազանի գետերի ու ջրային տարածքներին վերաբերող բառարան-հանրագիտարանները: Մակայն աղբյուրագիտական տեղեկությունները հասնում են մինչև անտիկ հեղինակներ:

5. Գետանունները բնորոշվում են ջուր կամ ջրային տարածք անվանող բառաշերտի գոյությամբ: Հարավկասպյան ավազանի գետանվանակերտ հիմնական բառապաշարում առանձնանում են իրանական, թյուրքական, արաբական շերտերը: Բնիկ իրանական շերտը ժամանակագրական առումով ամենահինն է, ամենակայունն ու ամենատարածվածը՝ *Āb* – «ջուր» < հ.իբ. \**ā/ap-* նախաձևից, *Čam* «գետ», հմմտ.՝ մ. իբ. \**čēmak* < հ. իբ. *čam-/\*kam-*, *Darre* – «ձոր, ձորակ, խորխորատ», *Rūd-* «գետ», հմմտ.՝ հ.պ. *rautah*, *Jū/jūb* – «առու, առվակ», հմմտ.՝ հ.պ. *yauvia*, *Čāl* «հոր → գետ» < հ.իբ. \**čāθa-*, *Xūnī* «աղբյուր → գետ» < հ. իբ. \**xānīk*, *Češme* – «աղբյուր → գետ», *Kāl* – «նեղ ջրանցք → գետ», *Kahriz* – «ստորգետնյա ջրանցք → գետ» < հ. իբ. \**kaθa-*, *Daryā* «ծով», հմմտ.՝ հ.պ. *drayah-*, *Kande* – «հոր → գետ» < հ.իբ. \**kan-*: Թյուրքական ջրանվանակերտ հիմնական բառամիավորները՝ *Čāy* «գետ», *sū* «ջուր → գետ», *Göl / köl* – «գետ», և արաբերեն՝ *Nahr* «առու»:

6. Հարավկասպյան ավազանի գետանունների կազմության իմաստային դաշտերն են գետերի ֆիզիկաաշխարհագրական տվյալները՝ ջրի ընթացքը, գույնը, համն ու հոտը, հունի աշխարհագրական տվյալները և այլն, անվանական արժեք ձեռք բերած հասարակ գոյականները, բուսանունները, կենդանիների անունները, անձանուններն ու պատմական իրադարձությունները, տեղանունները, պաշտամունքային նշանակությունը, ցեղանունները և բնաձայնությունները:

Գետանունների իմաստային կառուցվածքաբանության մեջ գերակայում են գունանուն արտահայտող միավորները՝ իր. Sefid «սպիտակ», Sorx «կարմիր», Zard «դեղին», Sīyāh «սև», թյուրք. Āq «սպիտակ», Qara «սև»:

7. Ըստ կազմության՝ զանազանվում են պարզ (արմատական, ածանցավոր), բարդ, հարադիր և բառակապակցություն գետանուններ (հարադիր և բարդ անունները հարաբերականորեն նոր կազմություններ են՝ ստեղծված իրանական լեզվական հիմքի վրա): Ածանցավոր ջրանունները հարավկասպյան ավազանի գետանուններում քանակային առումով գերազանցում են պարզ անուններին, բայց զիջում են բարդ անուններին: Ջրանուն կերտող ածանցները հիմնականում վերջաձանցներ են և ըստ գործածության բաժանվում են հետևյալ խմբերի՝ կենսունակ ածանցներ, որոնք շարունակում են ջրանվանաստեղծ գործառույթը, ածականակերտ ու գոյականակերտ նշանակությունը, և ոչ կենսունակ ածանցներ: Լեզվական պատկանելության տեսակետից ածանցները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ իրանական և թյուրքական, որտեղ գերակշիռ մաս է կազմում իրանականը՝ -ā, -ābād, -aj, -ak/-āk, -ān -bār/-bar/-rūdbār, -band, -dar, -ī, -īj, -kān/-gān/-qān/-jān, -sar, -vāš/-vaš, -ū: Ածանցներից մի քանիսը՝ -ābād, -kān, -stān, -sarā, -kelāt, առաջին հերթին տեղնավանակերտ ձևայիններ են և, ըստ ամենայնի, այդ ածանցներով կազմված ջրանունները փոխանցվել են տեղանուններից: Այսպիսով, տեղանունները գետանունների համալրման յուրօրինակ աղբյուր են:

8. Կասպից ծովի հարավային ավազանի բարդ ջրանունների մի մասը որոշյալ-որոշիչ հարադիր անունների շրջադարձ ձևերն են, որոնց բառակազմական բաղադրիչներից մեկը պատկանում է «ջուր» իմաստային դաշտին: Ըստ լեզվական պատկանելիության՝ բարդ գետանունները իրանական, թյուրքական, արաբական և հիբրիդային կազմություններ են:

9. Գետանունների կազմության խոսքիմասային մանրակաղապարներն են՝

- տեղանուն + տեսականիշ բառ, անձնանուն + տեսականիշ բառ,
- ցեղանուն + տեսականիշ բառ, հասարակ գոյական + տեսականիշ բառ, ածական + տեսականիշ բառ:

10. Հարավկասպյան ավազանի գետանունների ծագումնաբանական քննությունը պարզում է, որ այս անունների մեծ մասը ներկայացնում է իրանական լեզվոլորտը: Ընդ որում, հին իրանական արմատների կամ

ածանցյալների մի շարք արտացոլումներ պահպանվել են հարավ-կասպյան գետանուններում, սակայն դուրս են մնացել իրանական բառապաշարից (գոնե չեն վկայված): Իրանական գետանունների ոլորտն են մտնում բնիկ բարբառային ձևերը՝ թալիշերեն, մազանդարաներեն, գիլաներեն: Ուշ ջրանունները՝ նոր և նորագույն շրջանի, հիմնականում պարսկերեն կազմություններ են, որոնք լեզվական և իմաստային տեսակետից միանգամայն թափանցիկ ու հասկանալի են: Գետանունների մյուս շերտը թյուրքական անուններ են, որոնք նույնպես կարող ենք հիմնականում դասել ուշ գետանունների շարքը: Մյուս լեզվոլորտը՝ արաբական բառաշերտը, հիմնականում տեղ է գտել իսլամական պաշտամունքային բնույթի գետանուններում, թյուրքական ու իրանական միավորների հետ հիբրիդային ձևերում:

11. Գետանունների ծագումնաբանական այս քննությունը թույլ է տալիս հավաստելու, որ Կասպից ծովի հարավային ավազանի Թալեշ-Էնգելի, Սեֆիդռուդ, Գորգանռուդ, Չալուս, Նեքա-Թեջեն, Թալար-Բաբոլռուդ ենթավազաններում գերակայում է իրանական շերտը, թյուրքական միավորները բավական փոքր մաս են կազմում, որոնք չկան Արաքս և մասամբ՝ Աթրաք ենթավազաններում: Թյուրքական լեզվական տարրը իր ուրույն տեղն ունի Արաքսի ենթավազանում: Իսկ Սեֆիդռուդի ենթավազանը բնորոշվում է քրդերեն, Թալեշ-Էնգելին՝ թալիշերեն, գիլաներեն բարբառային լեզվանյութի առակայությամբ:

12. Ցեղանուն-գետանունների քննությունը ցույց է տալիս, որ այս անունների մի խումբը արտացոլում է դեռևս նախաիրանական շրջանի Կասպից ծովի հարավային ափերում բնակվող ցեղերի անունները՝ կազմելով ենթաշերտային գետանունների մի մասը, օր.՝ *Lāhījān Rūd*, *Karkar Čāy*: Իսկ մյուս խումբը արտացոլում է իրանական, քրդական ու թյուրքական այն ցեղանունները, որոնք, բնակություն հաստատելով գետերի մոտ, դրանք անվանկոչել են իրենց անուններով: Ցեղանուն-գետանունները որոշակիորեն մասնակցում են գետերի բազմանունության գործընթացին. միննույն գետը ոչ միայն ժամանակի ընթացքում է փոխել անունը, այլև հարևանությամբ ապրող տարբեր ցեղերի, բնակավայրերի բնակիչների կողմից անվանվել է տարբեր կերպ:

## ՀԱՎԵԼՎԱԾ

Ատենախոսությանը կից որպես հավելված ներկայացվում է քննարկված գետանունների ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

1. **Յախչալի, Մ.**, «Կասպից ծովի տեղանվանագիտության շուրջ», Orientalia, h. X, ԻԻԿ, Երևան, 2010, էջ 57-64:
2. **Յախչալի, Մ.**, «Կասպից ծովի ավազանի գետանվանակերտ հիմնական բառապաշարը» Orientalia, h. XI, ԻԻԿ, Երևան, 2010, էջ 92-98:
3. **Յախչալի, Մ.**, «Կասպից ծովի ավազանի խոշոր գետերը», Orientalia, h. XII, ԻԻԿ, Երևան, 2011, էջ 19-23:
4. **Յախչալի, Մ.**, «Գետանուններն ու ցեղանունները Կասպից ծովի հարավային ավազանում», Արևելագիտության հարցեր, հ. 7, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 530-536:

### **Мирджавад Яхчали**

#### **Названия рек южно-каспийского бассейна**

Диссертация на соискание ученой степени кандидата  
филологических наук по специальности 10.02.06  
«ДРЕВНИЕ И СОВРЕМЕННЫЕ ЯЗЫКИ АЗИИ»

Защита состоится 29 апреля 2013г. в 15<sup>00</sup> часов, на заседании  
специализированного совета ВАК по лингвистике 019, действующего в  
Институте языка имени Гр. Ачаряна НАН РА (адрес: Ереван 0015, ул.  
Григора Лусаворича 15).

### **РЕЗЮМЕ**

Диссертация посвящена семантическому, структурному и этимологическому анализу названий рек южно-каспийского бассейна. В отличие от названий населенных пунктов, гидронимы более устойчивы во времени. Поэтому и данные гидронимии представляют особую ценность для науки. Имена рек и их притоков свидетельствуют не только об этническом составе древнего населения, заселявшего некогда прибрежные территории, но и о миграциях и путях миграций древних племен, даже о сменах населения на одной и той же местности. Названия рек ирано-каспийского региона довольно сложно интерпретировать с точки зрения этимологического и семантического анализа. Во многих случаях довольно трудно восстановить изначальный вид названия и семантически обосновать его.

Данный труд – попытка выявить основной гидронимообразующий словарный состав Южного Каспия, представить словообразовательные особенности, а также семантические и этимологические аспекты гидронимов данного ареала. В работе приводится корпус гидронимообразующих формантов и субстратный материал, засвидетельствованный еще со времен прото-иранской эпохи.

В «Предисловии» обосновано историко-лингвистическое значение изучения гидронимов, а также представлен краткий очерк истории иранской гидротопонимики. Показательно, что работы, посвященные именно иранским гидронимам, немногочисленны и, как правило, выступают как разделы в исследованиях по топонимике, посвященных главным образом бассейну Каспийского моря в трудах многих иранских ученых (например, I. Afšār, L. Mofaxam Pāyān, ‘Epāyat-ollah Rezā и т. д.). В этом разделе рассматриваются южно-каспийские суббассейны и основные крупные реки изучаемого региона, а также представлена географическая характеристика вышеупомянутых ареалов. Имена суббассейнов (суббассейны называются именами крупнейших рек данного водного пространства) и крупные речные названия проанализированы в соответствии с историко-сравнительным методом. Суббассейнами Южного Каспия являются – Сефидруд, Аракс, Горганруд, Атрак, Хераз, Тальш-Энзели, Чалус, Талар-Баболруд, Нека-Теджен.

В первой главе диссертации – “Семантический анализ речных названий южно-каспийского бассейна”, представлена основная гидронимообразующая лексика, которая, естественно, принадлежит к семантической сфере “вода, водное пространство”. В данном словарном составе отдельно рассмотрены лексические пласты иранского, тюркского, арабского и иного происхождения. Во второй части этой главы анализируется семантическая структура речных названий с соответствующими примерами, которые, в свою очередь, по мере возможности подвергаются еще и этимологическому анализу. Здесь же представлена связь этнонимов и гидронимов, которая имеет большое значение для этногенетических исследований. Этнонимы могут быть вторичными образованиями от территориальных обозначений, а в других случаях, они, наоборот, являются основными наименованиями племенных территорий, в том числе и водных объектов.

Во второй главе – “Словообразовательные модели речных названий южно-каспийского бассейна”, рассматриваются вопросы словообразования речных названий. По структуре выделяются простые – корневые и суффиксальные, – сложные, составные и гидроним-словосочетания. Безусловно, нет четкой границы между сложными и составными названиями рек. В речных названиях всегда функционирует послелог.

Несколько моделей речных названий с разными частями речи:

- имя существительное, имя прилагательное, числительное,
- имя существительное + числительное и наоборот,
- существительное + прилагательное и наоборот,
- существительное + глагольная основа.

В третьей главе диссертации – “Языковая атрибуция названий рек”, производится генетический анализ лексического материала. В данной главе отмечены следующие генетические группы речных названий:

- Субстратный - Lāhijān Rūd, Karkar Čāy, Pūlarūd, Līsārā и т. д.
- Иранский (включая и диалектные формы)- Kālzū, Tūlāb Xāla, Ešmak, Bāy-e Šāhān и т. д.
- Тюркский - Āqsū, Gešlāq, Sārīs и т. д.
- Арабский - Mašhad, Malek, Samā и т. д.
- Гибридный – ир. ед. + тюрк. ед., ир. ед. + араб. ед., тюрк. ед. + араб. ед. – со своеобразно меняющейся последовательностью, например, Qarnāva, Āb Mīrānlū, Āq Band, Safārūd и т. д.

В “Послесловии” суммируются основные результаты диссертационной работы (12 пунктов). В качестве приложения представлен полный список названий рек исследуемого ареала.

### **Mirjavad Yaxchali**

#### **The River-Names of the South Caspian Basin**

*A thesis for PhD degree in Philology, speciality 10.02.06,  
The Ancient and Modern Languages of Asia (Iranian languages). The  
defence will take place on April 29, 2013 at 15<sup>00</sup> at the address 0015 Yerevan,  
Grigor Lusavorich St. 15 at the special session of the Academic Council (N  
019 on Linguistics) of the Hrachia Acharian Institute of Linguistics.*

## Summary

The dissertation aims at the semantic, structural and etymological analysis of the river-names of the South Caspian basin. Hydronyms, unlike different names of settlements (towns, villages etc.), are more persistent in a long period of time. Therefore, all the recorded units are of utmost scholarly interest. Names of the rivers and their tributaries reveal not only the ethnic composition of the ancient population, inhabiting the territory adjacent to the riverside, but also attest the migration and the ways of migration of the old tribes, even the changes in population on the same territory. The river-names of Iranian-Caspian region are rather difficult to interpret from the standpoint of semantic and etymological analysis. In many cases it is hard to reconstruct the initial form of the name and give the semantic analysis.

The presented dissertation is an attempt to reveal the basic hydronymic lexicon, to explain the specific derivational features of the river-names, as well as to perform a thorough semantic and etymological analysis. Furthermore, the work includes a comprehensive corpus of hydronymic suffixes (formants), as well as the substrate elements attested from the Proto-Iranian epoch.

The first part of the dissertation - "Introduction", contains a brief outline of the history of the Iranian hydroponymy and the state of research in the field. It should be noted that the number of studies in Iranian hydronymy is very few, being as a rule parts of toponymical researches. (cf., e.g., I. Afšār, L. Mofaxam Pāyān, 'Enāyat-ollah Rezā and others). The primary focus of this part of the research is South Caspian sub-basins and the major rivers of the area under study. The geographical characteristics of the above mentioned sub-basins have been presented in this part of dissertation. The names of sub-basins (the sub-basins are called after the major river of the research area) and the major river-names have been studied in accordance with historical-comparative method. There are several South Caspian sub-basins: Sefidud, Araxes, Gorganrud, Atrak, Heraz, Talish-Enzeli, Chalus, Talar-Babolud and Neka-Tejen.

The first chapter of the dissertation - "The Semantic Analysis of the River-names of the South Caspian basin", includes the basic hydronym-formative lexicon, which is certainly a part of the semantic sphere of "water, water area". The Iranian, Turkic, Arabic and foreign vocabulary-strata have been distinguished and considered in the abovementioned lexicon. The semantic

structure of the river-names is studied in the second part of this chapter, and the respective examples, along with possible etymological analysis, are also presented. The relationship between ethnonyms and hydronyms is very important for ethnogenetic researches. The ethnonyms can be secondary formations from the territorial designations, but in other cases, on the contrary, they can present the basic denomination of the tribal territory, including water element.

The second chapter - “Principles of Derivation and Models of South Caspian River-names, Including Parts of Speech”, is focused on different ways and methods of derivation of river-names. River-names are differentiated by structure: simple – rooted and suffixed; complex, compound and word combinations. Definitely, there is no strict border between complex and compound river-names. Suffixed river-names always contain postpositions. Several models of river-names, including different parts of speech:

- noun, adjective, numeral,
- noun + numeral and vice-versa,
- noun + adjective and vice-versa,
- noun + verbal basis.

The third chapter – “River-names According to their Origin”, includes a thorough genetic analysis of the South Caspian river-names. In the abovementioned section the following genetic groups of river-names have been considered:

- Substrate - Lāhījān Rūd, Karkar Čāy, Pūlarūd, Līsarā and so on.
- Iranian (including also the dialectical forms) - Kālzū, Tūlāb Xāla, Ešmak, Bāy-e Šāhān and so on.
- Turkic - Āqsū, Gešlāq, Sārīs and so on.
- Arabic - Mašhad, Malek, Samā and so on.
- Hybrid – Ir. + Turk., Ir. + Arab., Turk. + Arab. – with often changed sequence of order, for example, Qarnāva, Āb Mīrānlū, Āq Band, Safārūd and so on.

In the final section of the thesis (in the “Afterword”) the author summarizes the results of the work obtained during a thorough investigation of the hydronymic denominations (including 12 clauses). The Appendix includes the complete list of hydronyms studied in the dissertation.